

ՆԵՐԴԻՐՆԵՐ

ՆԵՐԴԻՐ 1. Կարող են փոքր երկրները մրցակցել համաշխարհային տնտեսության մեջ

Ֆրեդերիկ Սիլլան, Եվրոմիության ծրագրերի և տեխնիկական խորհրդատվության միջազգային փորձագետ, *Scottish Enterprise-ի տարածաշրջանների զարգացման և քաղաքային բնակավայրերի բարելավման բաժնի ծրագրի ղեկավար*

Սույն ակնարկում ներկայացված է Հայաստանից ոչ շատ մեծ մի երկիր՝ Իռլանդիան, որն ունի մոտավորապես 4 մլն բնակչություն:

Իռլանդիան, որպես երկիր և տնտեսություն, փոխակերպվել է վերջին երեք տասնամյակների ընթացքում և օրինակ ու վկայություն է այն բանի, որ տարածքը նշանակություն չունի. նախ և առաջ նշանակություն ունի որակը՝ կառավարությունների և պետական հաստատությունների կողմից մշակված տեխնոլոգիաների **որակը**, տնտեսական և հարկաբյուջետային ծրագրման որակը, բոլոր մակարդակներում կրթության որակը, և, ի վերջո, գործող ու սկսնակ ձեռնարկություններին տրամադրվող գործարար օժանդակության որակը: Երկրորդ՝ նշանակություն ունի ճիշտ օրակարգ և **գերակայություններ** սահմանելը: Իռլանդիայի դեպքում, որն ունեցել է շատ փոքր ներքին շուկա, ոչ մեծ արդյունաբերական կարողություններ, քիչ կամ ոչ մի հանքային ռեսուրս, այլ միայն չնչին գազի պաշար ծովում, դա, ըստ էության, նշանակում էր կենտրոնանալ **մարդկանց** և **հմտությունների** վրա, իսկ ավելի ստույգ՝ գիտական հետազոտությունների, տեխնոլոգիական զարգացման ու նորարարության վրա:

Այդ բնագավառներում գործելիս՝ Իռլանդիան հետևողական վճռականություն ու պատրաստակամություն է ցուցաբերել, հատկապես, մասնավոր հատվածին աջակցելու ու դրա հետ համագործակցելու առումով: Աջակցության ու համագործակցության շարժիչ ուժը տնտեսական զարգացման կիսանկախ պետական գործակալություններն էին, որոնք խթանում էին տնտեսական զարգացումը ազգային և տարածաշրջանային մակարդակներում, մասնավորապես՝

- Enterprise Ireland («Ձեռնարկություն Իռլանդիա»)
- IDA – Industrial Development Authority (Արդյունաբերական զարգացման մարմին) (ՕՈՒՆ-ի համար)
- Irish Tourism Board (Հրուսաշրջության հարցերով Իռլանդական խորհուրդ),
- Food Board Ireland (Սննդի արդյունաբերության Իռլանդական խորհուրդ):

Մասնավոր - պետական գործընկերության անհրաժեշտությունը

Առավել զարգացած, ժողովրդավարական և ընդլայնվող տնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ մասնավոր ու պետական հատվածների միջև **գործընկերությունը** կենսականորեն անհրաժեշտ է, և որ այն պետք է գիտակցված լինի: Եվրոպայում՝ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան, վերջին երեսուն տարիների ընթացքում մշակված առանցքային գործակառույցները ներառել են տարածաշրջանային տնտեսական զարգացման տարբեր նախաձեռնություններ: Իհարկե, նման նախաձեռնությունների համար լավագույն մոդել չկա: Յուրաքանչյուր եվրոպական երկիր ունի իր ուրույն մշակույթը, տնտեսական պարբերաշրջանը, տնտեսական աճի տեմպը, զբաղվածության մակարդակը, սոցիալական ու զարգացման կարիքներն ու գերակայությունները: Այնուհանդերձ, տնտեսական զարգացման տարածաշրջանային առավել բարեհաջող մեխանիզմները, ինչպիսին կար Իռլանդիայում, մեկ ընդհանուր բան ունեն. պետական ու մասնավոր հատվածների միջև կար **կայուն համաձայնություն** (ներառյալ կառավարության անդամները, առանցքային պատասխանատու նախարարությունները և գործարար համայնքի ներկայացուցիչները):

Իռլանդիայում բարձրաստիճան քաղաքական գործիչներն ու գործարարները գիտակցեցին, որ անհրաժեշտ է ցանկալի է այս կան այն կերպ ծրագրել տնտեսական զարգացումը ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում, մասնավորապես, որ տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր մեխանիզմներ և փոփոխել եղած «ստատուս քվոն»: 1960-ականներին և 1970-ականներին Իռլանդիան շարունակում էր չափազանց կախված լինել ավանդական գյուղատնտեսությունից և տուժում էր իր կրթված երիտասարդների արտագաղթից: Միևնույն ժամանակ, Իռլանդիայում տեղի էր ունենում դանդաղ արդյունաբերական վերակառուցում /կառուցվածքային փոփոխություն/, ընդ որում՝ անկում էին ապրում առաջնային ու երկրորդային մշակող արդյունաբերության ճյուղերը, արագորեն աճում էր գործազրկությունը, գնաճը երկնիչ էր: Այդ ամենի հետևանքով առաջացել էին սոցիալական ու քաղաքային բնակավայրերին բնորոշ մեծ դժվարություններ: Որոշ չափով հենց այդ իրավիճակն էլ մղեց տարածաշրջանային տնտեսական զարգացման նոր մեխանիզմների (գործակալությունների) ստեղծմանը: Դրանք այժմ վերածվել են ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում գործող՝ շուկայական պահանջներով գործող կատարելագործված կազմակերպությունների ցանցի, որոնք զգալի տնտեսական արդյունքներ են տվել:

Դա օգնեց Իռլանդիային մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով եվրոպական երկրների ցանկում 1970 թվականին վերջին շարքերից տեղափոխվել առաջին շարք: Իռլանդիան այժմ երկրորդ տեղում է, զիջում է միայն Լյուքսեմբուրգին և առաջ է անցել Ֆրանսիայից, Միացյալ Թագավորությունից ու Գերմանիայից:

Դա չի նշանակում, որ հաջողությունն ամբողջությամբ պետք է վերագրել տարածաշրջանային (տնտեսական) զարգացման գործակալություններին, սակայն դրանք մեծապես նպաստել և նպաստում են համաշխարհային տնտեսության մեջ հաջողությամբ մրցակցելու համար անհրաժեշտ զարգացման, գործարար ու խթանիչ ենթակառուցվածքների ստեղծմանը: Իռլանդիայի քաղաք դասերը համահունչ ու կիրառելի են Հայաստանի ապագա զարգացման համար: Կարելի է պնդել, որ 2006 թվականին Հայաստանն ուներ 1970-ականների Իռլանդիային նմանվող առանձնահատկություններ, մասնավորապես՝

- Ժայռամասային /հետամնաց/ երկիր՝ գերիշխող լայնածավալ հարևաններով,
- տասնամյակներ տևած արտագաղթ (դեպի ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա),
- լավագույն կրթությամբ բնակչության (երիտասարդների) արտագաղթ,
- տնտեսության մեջ պետական հատվածի գերակայություն,
- տեղական փոքր շուկա,
- դեպի ավելի մեծ (հարևան) շուկաներ արտահանումների չօգտագործված ներուժ,
- մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցածր ցուցանիշ՝ համեմատած Միացյալ Թագավորության /ՄԹ/ և Եվրոպայի հետ,
- հարուստ վերնախավի և գործազուրկ ու թերզբաղված աճող բնակչության միջև խորացող անհամաչափություններ,
- բարձր գնաճ,
- տեղական «ոչ մրցունակ» գործարարություն (ցածր արտադրողականություն),
- գյուղատնտեսության գերակայություն,
- արագ անկում ապրող ավանդական մշակող արդյունաբերության ճյուղեր:

Իռլանդիայից երեսուն տարի պահանջվեց իր տնտեսությունն այնպես դիրքավորելու համար, որ համաշխարհային շուկայում կարողանա հաջողություն ապահովել: Մասնավորապես, Իռլանդիան ինքն իրեն դրսևորեց որպես երկիր, որն ավելի ձկուն է, քան թերևս եվրոպական որևէ այլ երկիր: Այս փաստը հաճախ ուրիշ երկրների համար լավ օրինակ էր ծառայում: Բայց դա մեկն է շատերից: Յուրաքանչյուր երկիր պետք է ոչ միայն օգտագործի իր առանձնահատուկ ուժեղ կողմերը, այլ նաև հնարավորինս անկեղծորեն գնահատի և հասցեագրի իր թույլ կողմերը:

Իռլանդիան այսօր

2006 թվականին Enterprise Ireland-ը հրապարակեց Իռլանդիայի վերջին տարիների տնտեսական կատարողականի տեսությունը: Հիմնական փաստերը, ներառյալ առևտրի վերաբերյալ տվյալները, շատ տպավորիչ են և ցույց են տալիս, թե ինչ երկար ճանապարհ է անցել Իռլանդիան՝ 1960 թվականի երբեմնի ագրարային, ցածր եկամուտներով, ուրիշներից կախյալ՝ տնտեսությունը 2007 թվականին դարձնելով անկախ ու եռանդուն արդիական տնտեսություն, որին հատուկ են.

- Արտահանման համաշխարհային բնույթը. Իռլանդիայում արտահանումների ընդհանուր ծավալը համահավասար է շատ ավելի մեծ երկրների ծավալներին, ինչպիսիք են Բրազիլիան, Ավստրալիան և ավելի մեծ է, քան Հնդկաստանի արտահանումը:
- Արտահանման բարձր աճի տեմպ. Իռլանդիայի արտահանումների աճի տեմպը երկու անգամ մեծ է ԵՄ-ի միջինից և երեք անգամ մեծ է համաշխարհային ընդհանուր առևտրի աճից:
- Առաջատար արտահանող լինելը.² Իռլանդիան աշխարհում ծրագրային ապահովման և կենսադեղագործական նյութերի առաջատար արտահանողներից է:
- Աշխարհում Իռլանդական ընկերությունների առաջատար լինելը. մի շարք ընտրված ճյուղերում իռլանդական ընկերությունները համարվում են համաշխարհային առաջատարներ՝ ներառյալ դեղագործության, կենսատեխնոլոգիաների, ՏՏ ծրագրային ապահովման, հեռահաղորդակցության և բժշկական սարքավորումների ճյուղերը:
- Ձեռնարկատիրական մշակույթ. մեկ շնչի հաշվով Իռլանդիան աշխարհում ամենամեծ քանակությամբ սկսնակ ընկերություններ ունի:³

Որպես արդյունք հատկապես վերջին տասնամյակում շահել է երկիրն ամբողջությամբ, ներառյալ՝

- մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 36,000 եվրո՝ երկրորդ ամենաբարձր տեղը Եվրոպայում,
- ՀՆԱ-ի աճը տարեկան 5.5%՝ համեմատած ԵՄ-ի 2.2% միջինի հետ,
- բաց տնտեսություն՝ արտահանումը կազմում է ՀՆԱ-ի 86%-ը, իսկ ներմուծումը՝ 70%-ը,
- գործազրկության ցածր մակարդակ՝ 4.2%՝ ամենացածրը ԵՄ-ում (ԵՄ միջին - 8.8%)
- հիմնարար ու կիրառական հետազոտությունները ու մշակումները գերակայություն են. ներկայումս Իռլանդիան դրա վրա ծախսում է 3.5 մլրդ եվրո,
- գործարարությանը միտված մշակույթ.⁴ Իռլանդիան աշխարհում 6-րդն է որպես երկիր, որտեղ կարելի է գործարարությամբ զբաղվել (ՄԹ-ն՝ 7-րդ տեղը և ԱՄՆ-ն՝ 8-րդ տեղը)
- որակյալ կրթություն.⁵ Իռլանդիան աշխարհի 60 երկրների մեջ զբաղեցնում է 4-րդ տեղը (կարևոր է, որ բնակչության 40%-ը 25 տարեկանից ցածր տարիքի է, և աշխատուժը արագորեն աճում է (ներկայումս 2 մլն աշխատող):

Այսպիսով, ինչի՞ շնորհիվ համեմատաբար կարճ ժամանակահատվածում ծայրամասային, արտագաղթից տառապող ու մեկուսացված երկիրը վերածվեց Եվրոպայում, եթե ոչ աշխարհում, ամենաաշխույժ տնտեսություններից մեկի:

Իռլանդիայի աճը 1994 – 1998թթ.-ին	Իռլանդիա	ԵՄ
ՀՆԱ	9.2	2.3
Զբաղվածություն	5.8	0.8
Սպառում	6.2	2.2
Արտահանումներ	17.1	7.5
Ներմուծումներ	14.2	7.3

Աղբյուր՝ ՏՀԶկ /OECD/, վիճակագրության կենտրոնական գրասենյակ

Կառավարությունը հետևյալ կերպ է բացատրում ԵՄ միջինի նկատմամբ Իռլանդիայի գերազանցության (ՀՆԱ-ի, զբաղվածության, սպառման, արտահանումների և ներմուծումների աճ) պատճառները.⁶

- 1970-ականներին Իռլանդիայում ծնելիության բարձր մակարդակը, որը հանգեցրել է 1990-ականներին աշխատունակ բնակչության մեծ աճի:
- Գործազրկության անկման ու թոշակառու տարիքի (65 տարեկան) հասնող բնակչության աճի համակցությունը, ինչը հանգեցրել է ժողովրդագրական դրական վիճակի և կախյալ (խնամքի տակ գտնվող) բնակչության թվի մեծ անկման, որն իր հերթին մասամբ հանգեցրել է մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների աճին:
- Կրթության բոլոր մակարդակներում կատարված զգալի ներդրումներն ու դրա արդյունքում աշխատուժի որակի բարձրացումը:
- Ֆիզիկական կապիտալում, ինչպես նաև մարդուժի մեջ պետական մեծ ներդրումները, ընդ որում՝ Իռլանդիան մեծապես շահել է ԵՄ-ի կառուցվածքային և Համերաշխության հիմնադրամներից ստացված աջակցությունից (քսան տարվա ընթացքում 12.5 մլրդ եվրո):
- Համեմատաբար ցածր վարկավորման դրույքաչափեր, որոնցով խթանվել է մասնավոր հատվածի կողմից խոշոր ներդրումների կատարումը:
- Աշխատողների և ընկերությունների վրա հարկային բեռի թեթևացումը:

Այնուամենայնիվ, կան նաև Իռլանդիայի տնտեսության արագ հաջողության (հատկապես 1990-ականներին) լրացուցիչ բացատրություններ.⁷

- 1960 թվականից սկսած՝ երեսուն տարի շարունակ Իռլանդիան արդյունաբերական քաղաքականության մեջ շեշտը դրել էր բարձր ավելացված արժեքի մշակող արդյունաբերության վրա: Այն հիմնականում իրականացվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների և որպես խթան առաջարկվող դրական ֆիսկալ (հարկաբյուջետային) քաղաքականության շնորհիվ:⁸
- Օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցում նախաձեռնողական և ոչ թե արձագանքող մոտեցում, ինչը թույլ է տալիս ունենալ ավելի ընտրողական ու մասնահատուկ ճյուղային քաղաքականություն ու մեծ հատույցներ:⁹
- Անվճար միջնակարգ կրթության ներմուծում, իսկ վերջերս բարձրագույն կրթության վրա մեծ ուշադրության հատկացում, ինչով շատ արագ բարձրացվեց երիտասարդ աշխատուժի հմտությունների մակարդակը (Միացյալ Թագավորությունում եղած մակարդակից բարձր և Եվրամիության միջինին հավասար):
- Աշխատուժի բարձր որակ՝ համեմատած իր բարձր գնի հետ, ինչով ապահովվում է բարձր մրցունակություն, չնայած հմուտ աշխատուժի ներհոսքին (հատկապես ԵՄ-ին նոր անդամակցած պետություններից):
- 1992 թվականին Եվրոպական միասնական շուկայի ստեղծումը և ապրանքների ու ծառայությունների տեղաշարժի ավելի մեծ ազատությունը:
- ԵՄ-ի կառուցվածքային հիմնադրամների միջոցների օգտագործումը, ինչպես նաև ԵՄ-ի ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության (ԸԳՔ) միջոցով գյուղատնտեսության ոլորտում լրավճարների տրամադրումը:
- Ֆիսկալ քաղաքականությունների բարելավումը.¹⁰ պետական հատվածի ծախսերի կրճատումը և պետական հատվածում զբաղվածության վերակառուցումը:
- Ամբողջ աշխարհում տնտեսական աճի հետ մեկտեղ տեղի ունեցավ ֆիսկալ վերադասավորում, ինչը նպաստեց Իռլանդիայի տնտեսական կատարողականի բարձրացմանը:
- Իռլանդիայի տնտեսությունը «թափ առավ» սկզբնական շատ ավելի ցածր մակարդակից, քան ԵՄ-ի միջինն էր:

2007 թվականին Իռլանդիան դեռ շարունակում էր առաջ գնալ՝ ունենալով զգալի ուժեղ ու դեռ պահպանված թույլ կողմեր:

Ուժեղ կողմերն են, մասնավորապես՝

- վերջին տարիների ընթացքում կայունության միտված մակրոտնտեսական քաղաքականությունների շարունակական իրականացում,
- տնտեսական և սոցիալական քաղաքականության շուրջ լայն փոխհամաձայնության առկայություն,
- լավ կրթությամբ անձանց թվի աճ,
- բարենպաստ ժողովրդագրական կառուցվածք,
- ներդրումների համար գրավիչ վայր:

Իռլանդիան, սակայն, շարունակում է գիտակցել նաև իր **թույլ կողմերը**.

Թույլ կողմեր՝

- տրանսպորտային ենթակառուցվածքների պակաս
- խոշոր քաղաքային կենտրոնների գերբեռնվածություն
- շրջաններում և դրանց միջև տնտեսական աճի անհամաչափություններ
- բնակարանների պակաս
- մարդուժի և որոշ հմտությունների պակաս
- դեռևս թերզարգացած տեղական արդյունաբերություն
- աղքատության կենտրոնացում և հնարավորությունների սակավություն

Անցյալ և ներկա **Չարգացման ազգային ծրագիրը** (NDP) հիմնված է վերը նշված ուժեղ ու թույլ կողմերի վրա: 2000-2006թթ. ծրագրով նախատեսված են եղել վեց գերակա խնդիրներ՝

- տնտեսական ենթակառուցվածքներ, առաջնային ճանապարհներ, հանրային տրանսպորտ և շրջակա միջավայր,
- զբաղվածություն և մարդկային ռեսուրսներ
- արտադրական հատված
- գյուղական վայրերի զարգացում
- սոցիալական կյանքում ներգրավվածության բարձրացում
- սոցիալական կապիտալ (բնակարանային պայմաններ և առողջապահություն)

	Եվրո մլն.	% ընդհանուրի մեջ
Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքներ	22,361	41
Զբաղվածություն և մարդուժի զարգացում	12,000	22
Արտադրական ներդրումներ	5,668	10
Գյուղական վայրերի զարգացում	8,554	15
Տարածաշրջանային զարգացում (2 գերակա տարածաշրջաններ)	6437	12
Ընդհանուր	55,020	100

Աղբյուր՝ Չարգացման ազգային ծրագիր, 2000-2006թթ.

Նախկինում հիմնականում կենտրոնանալով կարևորագույն քաղաքների (Դուբլին, Քորկ և Լայն-րիկ) և ՕՈՒՆ-ի վրա՝ իռլանդացիներն այժմ հստակ գիտակցում են տարածաշրջանային և ազգային տնտեսական և սոցիալական զարգացման, ինչպես նաև գյուղական ու քաղաքային վայրերի

զարգացման անհրաժեշտությունը: Սակայն դա տեղի է ունեցել միայն վերջերս՝ տնտեսական ու ֆիսկալ ազգային քաղաքականությունների հաջողությունից հետո, որոնցով հիմք է դրվել կայուն տնտեսական ու զբաղվածության աճի համար և, որ ամենակարևորն է, ստեղծվել է կայուն հարկային հենք (բազա): Հենց հարկային ընդլայնված հենքն էլ հնարավորություն է տալիս ներդրումներ կատարել տարածաշրջաններում և գյուղական զարգացման գործում: Այդ պարագայում էլ դեռ Իռլանդիայի համար հիմնական շեշտադրումը շարունակում է մնալ արտահանման առումով իր կարողության զարգացումը:

Enterprise Ireland («Ձեռնարկություն Իռլանդիա»)

Ձարգացման ազգային ծրագրի շրջանակում Իռլանդիայի կառավարությունը սահմանել է երկրի արդյունաբերական և տնտեսական զարգացման ընդհանուր ուղղությունները և շարունակում է ներդրումներ կատարել երկրի տնտեսական ենթակառուցվածքներում և կրթական համակարգի բոլոր մակարդակներում: Այդ ամենն ուղեկցվում է դրական ֆիսկալ քաղաքականությամբ, ինչով խթանվում են ընտրված ճյուղերում օտարերկրյա ներդրումների ներգրավումը և, այժմ էլ արդեն, ավելի շատ արտահանումները և դրա միջազգային ընդգրկվածության մեծացումը:

Ձբաղվածության մեծացման և մարդու զարգացման, ինչպես նաև արտադրական ներդրումների նպատակադրման գործում զարգացման հիմնական կառույցը Առևտրի և արդյունաբերության նախարարության ներքո գործող Enterprise Ireland-ն է: Enterprise Ireland-ը Իռլանդիայի կառավարության առևտրի և տեխնոլոգիաների գործակալությունն է: Այն ունի 1000 աշխատակից և աշխարհով մեկ սփռված 34 գրասենյակներ, իսկ տարեկան բյուջեն կազմում է 250 մլն եվրո: Գործակալությունը գլխավոր դերակատարություն ունի տնտեսական աճի խթանման, իռլանդական ընկերությունների զարգացման և դրանց միջազգային ընդգրկվածության ընդլայնման, ընկերություններին զարգացմանն ու արտահանման համար աջակցության տրամադրման գործում:

Երկրի տնտեսական աճի կեսը ներկայումս հիմնված է ապրանքների և ծառայությունների արտահանման վրա:

Enterprise Ireland-ը Իռլանդիայում արդյունաբերությանն ապահովում է զարգացման համար հիմնարար միջոցներով.¹¹

- Ֆինանսական միջոցների տրամադրում ընկերություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որպեսզի գործարարները կարողանան միմյանց հետ կամրջել իրենց գործի պարբերաշրջանները:
- Շուկայավարման հարցերով խորհրդատվություն, որպեսզի գործարարները կարողանան լավագույնս որոշել իրենց նպատակակետերը և դիրքավորել իրենց արտադրանքները:
- Գործառնական ենթակառուցվածքներ, ներառյալ ինկուբատորներ և տեխնոլոգիաների հարցերով օժանդակություն:
- Աշխարհում սփռված 34 գրասենյակների ցանց, որոնցով ապահովվում է անմիջական մատչելիություն դեպի միջազգային շուկաներ:
- Ուղղորդված ծառայություններ, որոնցով խթանվում է նոր գործերի հնարավորությունները, կապերի ու քլաստերների ստեղծումն ու զարգացումը:

Աճի մեծ ներուժով ճյուղեր և տարածքային նպատակակետեր

Հաշվի առնելով Իռլանդիայի սակավաթիվ բնակչությունը՝ Իռլանդիայի հաջողության բանալին հաջող ու կայուն արտահանումն է դեպի աճի մեծ ներուժ ունեցող շուկաներ ու երկրներ:

Աճի մեծ ներուժ ունեցող ճյուղերի ընտրությունն ընկած է գործարարությանը տրամադրվող աջակցության հիմքում, ներառյալ գործող քլաստերներին ու նոր ստեղծվողներին տրամադրվող աջակցությունը այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են ծրագրային ապահովումը և ծրագրավորման ծառայությունները, հեռահաղորդակցությունը, դեղագործությունն ու կենսատեխնոլոգիաները, ծարտարագիտությունը, միջազգային առևտրային ծառայությունները, էլեկտրոնային կրթությունը, բժշկական սարքերը և ախտորոշումը, ավիացիոն արդյունաբերությունը, գյուղատնտեսական մեքենաները, հուշանվերների և կահույքագործությունը:

Enterprise Ireland-ի կողմից տրամադրվող գործարար աջակցության համար սկզբնական աշխարհագրական նպատակակետեր էին ԱՄՆ-ն և Եվրոպան, իսկ այժմ նաև այնպիսի նորահայտ շուկաներ, ինչպիսիք են Հնդկաստանը, Չինաստանը, Ճապոնիան և Պարսից ծոցի երկրները: Այս շուկաները, որոնց բաժին է ընկնում աշխարհի ՀՆԱ-ի մոտ կեսը, այժմ ներկայացնում են իռլանդական ընկերությունների արտահանումների ընդլայնման միայն 4%-ը: Համարվում է, որ այդ երկրները որպես արտահանման շուկաներ աճում են երկրաչափական պրոգրեսիայով:

Գործնական օժանդակություն գործարարությանը

Enterprise Ireland-ը մշակել և իրականացնում է արդյունավետ գործառնություններ մասնավոր հատվածին լայն տիրույթի աջակցություն տրամադրելու համար, հատկապես արտասահմանում՝ նպատակային երկրներում տեղակայված իր 34 գրասենյակների միջոցով: Իրականացվող գործառնությունները ներառում են՝

- հնարավոր գնորդների և գործընկերների ծանոթացում իռլանդական համապատասխան ընկերությունների հետ («մեկը մեկին» սկզբունքով),
- գնորդներին Իռլանդիա բերելը, որպեսզի հանդիպեն իռլանդական համապատասխան ընկերությունների հետ,
- տոնավաճառների, ինչպես նաև վաճառքի (շուկայահանման) առանձին ուղիների կազմակերպում,
- շուկաների վերլուծություն ու դրանց վերաբերյալ ակնարկների /գեկույցների, ամփոփագրերի/ պատրաստում, ուսումնավարժական ուղևորությունների և առաքելությունների (դեպի դուրս ու ներս) կազմակերպում,
- Իռլանդիայի ներկայացում և առաջնորդում որպես **բարձրորակ** ապրանքների և ծառայությունների աղբյուր,
- ընկերություններին տեղում աջակցության տրամադրում՝ միջազգային ընդգրկվածության մեծացման համար,
- աջակցություն ընկերությունների միջև կապերի (ցանցերի) և քլաստերների զարգացման գործին,
- իռլանդական ընկերությունների համար համաշխարհային ընկերությունների հետ կապերի հաստատման գործի դյուրինացում՝ տեխնոլոգիաների ու մտավոր սեփականության փոխանակման նպատակով:

Կարևորն այն է, որ վերը նշված աջակցությունը տրամադրվում է **միայն** աճի մեծ ներուժ ունեցող հատկորոշված ձյուղերի փոքր ու խոշոր ընկերություններին, որոնք ձգտում են միջազգային ապարեզ դուրս գալ: Ընկերություններին կարող է տրամադրվել ու տրամադրվում է նաև դրամական ու տեխնիկական միջոցներ ու մարդուժ, սակայն այդ դեպքում ընկերությունները պետք է իրենք էլ դրամական մասնակցություն ունենան:

Enterprise Ireland-ը և մարդկային կարողություններ

Իռլանդական տնտեսության ներկայիս հաջողությունը և, մասնավորապես, արտահանման կատարողականը հենվում է մարդկանց կրթության ու հմտությունների, ինչպես նաև նորարարության ու եռանդի վրա (անհատներ, որոնք չեն խուսափում ռիսկից, ձեռներեցներ և աճի մեծ տեմպ ունեցող ընկերություններում աշխատողներ): Նմանապես վերջին երեք տասնամյակների տնտեսական հաջողությունը հիմնված է այն մարդկանց նվիրվածության վրա, որոնք գործարար խորհրդատվություն և աջակցություն էին տրամադրում նպատակային ձյուղերին, արտադրական քլաստերներին և առանձին ընկերություններին:

Enterprise Ireland-ն իր 1000 հոգանոց աշխատակազմը ձևավորում է երկրում եղած հմտությունների և փորձառու մասնագետների մեծ պաշարից: Միաժամանակ, այն աճեցնում ու վերապատրաստում է ոչ միայն աշխատանքի անցնող նորավարտ մասնագետներին, այլև իր ողջ անձնակազմին՝ անընդհատ նոր հմտություններով ու մարդկանցով համարելով ուղղակիորեն իր կառույցը և անուղղակիորեն աճի մեծ ներուժ ունեցող առանձին ընկերությունները: Կազմակերպության մշակույթը հիմնված է մրցունակության, նորարարության, ռիսկի դիմելու պատրաստականության ու

թիմային աշխատանքի վրա: Կազմակերպությունում քիչ են նախկինում քաղժառայող աշխատած մարդիկ, շատերը տեխնիկական կրթությամբ մասնագետներ են:¹² Հիմնական կարողությունները ներառում են գործարարության կարիքները հասկանալու ունակությունը, գործնական աջակցություն տրամադրելու ունակությունը և, ամենակարևորը, ընկերություններին ինչ-որ արժեքավոր բան տալու ունակությունը:

Իռլանդիայի տնտեսական հաջողությունը ձեռք է բերվել հիմնավորապես պետական և մասնավոր հատվածների միջև շարունակական ու փոխլրացնող գործընկերության միջոցով: Դրանից շահել է իռլանդական ժողովուրդը: 200 տարվա ընթացքում առաջին անգամ ապրելու և աշխատելու համար երկիր են վերադառնում այդ երկիրը նախկինում լքած մարդկանց ժառանգները. այժմ Իռլանդիան զուտ ներգաղթ ունի:¹³

Իռլանդական պատմությունը մտածելու նյութ է տալիս նմանակից այն երկրներին, որոնք ձգտում են երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացում ունենալ՝ ավելի ու ավելի խստացող մրցակցությամբ շուկայական ասպարեզում: Դա ամենևին չի նշանակում, որ Հայաստանը պետք է ընդօրինակի այն ամենն, ինչ արել կան անում է Իռլանդիան, այն պարզ պատճառով, որ Հայաստանը տարբերվում է իրեն շրջապատող արտաքին ու ներքին հանգամանքներով և մշակույթով:

Սակայն արժե հասկանալ Իռլանդիայի օրինակը. ձեռք բերված նվաճումների համար երեսուն տարի պահանջվեց: Այդ ժամանակահատվածում շատերից նվիրվածություն պահանջվեց, որպեսզի հասկացվեն երկրի տնտեսության **իրական** ուժեղ ու թույլ կողմերը: Պահանջվեց ընդհանրական նպատակ ու հավատարիմ գործընկերություն, ինչպես նաև կարողություն՝ ունենալու հստակ կենտրոնացվածություն ու մշակելու գործնական տնտեսական և սոցիալական ծրագրեր՝ անհրաժեշտ առաջնահերթությունների սահմանմամբ ու բավարար միջոցներով: Ինչպես Իռլանդիան ցույց տվեց, պահանջվեց նաև հարափոփոխ միջավայրին հարմարվելու կարողություն և չնայած կատարված սխալներին՝ դասեր քաղելու ունակություն՝ պահպանելու հաջողության հասնելու ինքնավստահությունը:

¹ 1960 թվականին Իռլանդիան մեծապես կախված էր Միացյալ Թագավորությունից, որին բաժին էր ընկնում արտահանման և ցածր վճարվող ոչ հմուտ աշխատողների արտագաղթի 60%-ը: Իսկ 2006 թվականին Միացյալ Թագավորությանը բաժին է ընկել իռլանդական արտահանման միայն 17%-ը:

² IDC, Gartner և Forrester:

³ GEM հաշվետվություն:

⁴ Economist Intelligence Unit:

⁵ IMD Համաշխարհային մրցունակության տարեկան հաշվետվություն, 2006թ.:

⁶ Զարգացման ազգային ծրագիր, 2000-2006թթ.:

⁷ BSL, Ինչ են սովորեցնում մեզ իռլանդացիները, 2000թ. /BSL (2000) “What can the Irish Teach Us?”/

⁸ Իռլանդիայում ստացված շահույթների նկատմամբ հարկային արտոնություններ և այդ շահույթները ետ տանելու ազատություն, աշխատատեղերի համար տրվող դրամաշնորհներ, աջակցություն սարքավորումների և դրանց հետ կապված ենթակառուցվածքային ծախսեր կատարելիս:

⁹ Աշխարհում աճի մեծ ներուժ ունեցող ժյուլերի հատկորոշում, ինչպես նաև ժյուլային քլաստերների զարգացման (քլաստերների) մոտեցման մշակում:

¹⁰ 1995 թվականին հարկաբյուջետային կոնսոլիդացիա և 2.5% /բյուջեի դեֆիցիտից/ պակասորդի կրճատում մինչև 3.75% եկամտի /բյուջեի պրոֆիցիտի, ավելցուկի/. անհատական և կորպորատիվ հարկերի նվազեցում /38%-ից մինչև 24%/ և անհատական նպատների ավելացում:

¹¹ Տե՛ս Իռլանդական ձեռնարկության 2008-12թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:

¹² Ծուկայավարման, գիտահետազոտական աշխատանքի, ՏՏ ոլորտի, առողջապահության, արդյունաբերական հարաբերությունների /արտադրության կազմակերպման/, ֆինանսների, բանկային գործի, ճարտարագիտության և այլ մասնագետներ:

¹³ Եվրամիության ընդլայնումն, իհարկե, խթանեց գաղթը դեպի Իռլանդիա այնպիսի երկրներից, ինչպիսիք են Լեհաստանը, Հունգարիան և շատ այլ արևելաեվրոպական երկրներ: Այդ գաղթողների մեծ մասը մտադիր է մի օր վերադառնալ հայրենիք: Իռլանդիայի տնտեսական հաջողությունների մասին իսկական վկայությունը Իռլանդական ծագում ունեցող երիտասարդների ներգաղթն է ԱՄՆ-ից և Ավստրալիայից:

ՆԵՐԴԻՐ 2. Կելտական վագր. Իռլանդիայի մրցակցային ներուժի իրագործման արդյունք, թե՛ գործընթաց

Էլեանոր Դոյլ

Քորկի համալսարան
Բիզնեսի և իրավունքի քոլեջ
Տնտեսագիտության ֆակուլտետ
Իռլանդիա

Երբ խոսքը գնում է Իռլանդիայի բացարձակ ու համեմատական տնտեսական կատարողականի մասին, 1990-ականների սկզբից մինչև կեսերն ընկած ժամանակահատվածն առանձնահատուկ է և բացառիկ՝ ինչպիսի տնտեսական հենանիշի հետ էլ փորձենք այն համեմատել: «Իքոնոմիխթ» ամսագրում 1988 թվականին որպես «հարուստներից ամենաաղքատը» նկարագրված տնտեսություն, նույն հրատարակության բառերով, Իռլանդիան 1997 թվականին փոխակերպվել էր «Եվրոպայի շողացող լույսի»: 1960-1990թթ. ընկած ժամանակահատվածում Իռլանդիայում կենսամակարդակը (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ) տատանվել է ԵՄ 15-ի ցուցանիշների 58%-ից 65%-ի միջև, իսկ հաջորդ տասնամյակում բարձրացել է 2000թ. անցել է 100%-ը: Փոխակերպման չափը հենց Իռլանդիայի տնտեսության պատմության տեսանկյունից ակնհայտորեն երևում է աղյուսակ 1-ում. կենսամակարդակի (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ), զբաղվածության, արտադրողականության (ՀՆԱ մեկ աշխատողի հաշվով) և զբաղվածություն-բնակչություն հարաբերակցության աճի բարձր տեմպը էապես տարբերվում են 1993 թվականից առաջ և հետո ընկած ժամանակահատվածներում:

Աղյուսակ 1. Իռլանդիայում իրական ՀՆԱ-ի, բնակչության, կենսամակարդակի, զբաղվածության և արտադրողականության տարեկան աճի միջին տեմպերը. 1926-2005թթ. (%)

Ժամանակահատված	ՀՆԱ	Բնակչ.	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ	Զբաղվ.	ՀՆԱ մեկ աշխ.-ի հաշվով	Զբաղվ./բնակչ.
1926-47	0.9	0.0	0.9	0.0	0.9	0.0
1947-60	2.3	-0.4	2.7	-1.3	3.6	-0.9
1960-80	4.1	0.9	3.1	0.5	3.5	-0.4
1980-93	3.3	0.4	2.9	0.0	3.3	-0.4
1993-`00	8.3	0.8	7.4	4.7	3.5	3.8
2000-05	5.2 [^]	1.7 [*]	3.4 [^]	3.0 [~]	2.2 [^]	-

Աղբյուր՝ Kennedy (2001)՝ աղյուսակում ներկայացված 1993-2000թթ. բոլոր տվյալների համար:

[^]Տվյալներ Ազգային եկամուտներ և ծախսային հաշիվներից - Աղյուսակ Բ. Հիմնական ազդեցացված տվյալներ 2000-2005թթ., CSO:

^{*} 2005 թվականի տվյալներ՝ Վիճակագրության կենտրոնական գրասենյակ (CSO) տե՛ս www.cso.ie:

~Տնտեսական դիտարկումներ և հեռանկարներ, 2005թ., Իռլանդիայի կառավարության աշխատակազմ:

Իռլանդիայի «փոխակերպումը» աշխատուժի ավելցուկով և աշխատատեղերի քրոնիկ սակավությամբ տնտեսությունից լրիվ զբաղվածությամբ և աշխատուժի սակավությամբ տնտեսության, զարմացնում է փոխակերպման նկատելի սրընթացությամբ: «Առանց աշխատատեղերի աճի» հիմնախնդիրն ի վերջո լուծվեց: Ճակատագրի արտասովոր շրջադարձի արդյունքում երկիրը վաստակել

Է **Կելտական վագրի** անբասիր հեղինակություն, ինչը հիշեցնում է **Արևելյան Ասիայի վագրերին**՝ Յոնկոնգ, Սինգապուր ու Յարավային Կորեա, որոնց այդպես են կոչել 1980-ականների և 1990-ականների իրենց տնտեսական արագ աճի շնորհիվ:

Բազմաթիվ վերլուծական նյութեր կան, որոնցում փորձ է արվում հատկորոշել «վագրի» հայտնվելու արմատական պատճառները և, հիմքեր կան կարծելու, որ դա կարելի է բացատրել «հասնելու» (catch up) կամ «զուգամիտման» (convergence) պատճառներով, վերակառուցմամբ և տնտեսության հարմարեցմամբ, գործարար պարբերաշրջանի հանգամանքներով կամ Շումպետերյան ավանդույթով զարգացմամբ, երբ նորարարությունը, ձեռներեցությունը և վարկային միջոցների առկայությունը խթանում են տնտեսական փոխակերպումը: Չկա ընդհանուր համաձայնություն գործընթացի այն «պատճառի» շուրջ, որից ծնունդ է առել «վագրը», սակայն կան մի շարք գործոններ, որոնք կարող են բացատրություն կան, ավելի ստույգ, նախապայման համարվել և որոնք միասին վերցրած կազմում են այն բովանդակային հենքը, որով բացատրվում է, թե ինչպես կան ժամանակային առումով ինչո՞ւ ի հայտ եկավ Կելտական վագրը, մասնավորապես.¹

- Իռլանդիայի գրավչության բարձրացումը որպես անդրազգային այն ընկերությունների մասնաձյուղերի համար գործունեության վայր (մասնավորապես ԱՄՆ-ից), որոնք ձգտում էին արտահանել դեպի եվրոպական շուկաներ: (Ըստ ԱՄՆ-ի տնտեսական վերլուծության բյուրոյի տվյալների՝ 1995-2002թթ. ընկած ժամանակահատվածում Իռլանդիայում ԱՄՆ-ի ընկերությունների մասնաձյուղերի ստացած հատույցի չափը 20.1% էր, իսկ 1990-ականների ընթացքում՝ 25%, ինչն ամենաբարձրն էր ԵՄ-ի համեմատելի երկրների շարքում:² Անդրազգային հիմնական խաղացողները էլեկտրոնային սարքավորումների, դեղագործության ու ֆինանսական ծառայությունների ոլորտներից էին.
- Աշխատուժի բաց շուկայում մրցակցային աշխատավարձով, բարձր հմտությամբ, կրթությամբ և անգլիախոս աշխատուժի առկայություն:
- Մակրոտնտեսական կայունացում, ներառյալ գնաճի ճնշման նվազեցումը, մրցունակության փոխարինում՝ արտարժույթի արժեզրկմամբ աշխատավարձերի ճշգրտման միջոցով, ցածր հարկեր և աշխատավարձի սահմանման սոցիալական փոխհամաձայնության մոդել:
- Ձեռնարկատիրության համար նպաստավոր մշակույթի ընդունում, ընդ որում՝ նախնական որոշ քայլերում գիտակցվում էր, որ անհրաժեշտ է խթանել ռիսկից չխուսափող ձեռներեցություն ու գյուտարարությունը և պարզևատրել դրա համար:

Եթե ավելի խորությամբ ենք դիտարկում հնարավոր պատճառները, ապա ավելի երկարաժամկետ ազդեցությամբ գործոնները ներառում են արդյունաբերական քաղաքականության մեջ «դեպի դուրս ուղղված կողմնորոշման» վրա շեշտադրումը, որն ուրվագծված էր 1958 թվականին հրատարակված տնտեսական զարգացման հաշվետվությունում (հայտնի «Whitaker Report»-ում): Դա քաղաքականության առաջին միասնական ծրագիրն էր, որով սահմանվեցին տնտեսական աճի համար անհրաժեշտ քաղաքականությունները, որոնք են՝ հետագա արդյունաբերականացումն էր, ինչին հնարավոր էր հասնել միայն արտահանման շուկաներ դուրս գալու միջոցով, ինչը ենթադրում էր Իռլանդիայի զարգացման ռազմավարության վերակողմնորոշում՝ խիստ հովանավորչական ներմուծման փոխարինման ու նոր կայացող ճյուղերի պաշտպանության քաղաքականությունից դեպի արտահանման կողմնորոշված առևտրային քաղաքականության, որտեղ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ) առանցքային դեր էին կատարում: 1949 թվականին Արդյունաբերական զարգացման մարմնի (IDA) ստեղծումը կարևոր նախնական քայլ էր Իռլանդիայում ՕՈւՆ-ի խթանման փուլի համար: Արտահանման կողմնորոշված առևտրային քաղաքականության նպատակն էր ներմուծված մասնավոր կապիտալն ու տեխնոլոգիաներն օգտագործել լայն ու կատարելազորված արդյունաբերական հենք ստեղծելու համար, որը կունենար արտահանում/վաճառք բարձր հարաբերակցությունը (ինչով նվազեցվում էր տեղական ձեռնարկությունների հետ տեղական շուկայում մասնաբաժին ունենալու համար մրցակցությունը), և որով կկլանվեր աշխատուժի ավելցուկը, կնվազեցվեր արտագաղթը, ավելի արդյունավետորեն կօգտագործվեին բնական պաշարները, ավելի մեծ տեմպ կհաղորդվեր կապիտալի ձևավորմանը, կխթանվեր տնտեսական աճը և ավելի կբազմազանեցվեր ապրանքների արտահանումը՝ խթանելով գյուղատնտեսությունից մեծապես կախված լինելուց Իռլանդիայի տնտեսության անցումը դեպի առավել կայուն և ընդլայնվող արդյունաբերական հենքի (O'Sullivan, 1995թ., էջ 140):

Օտարերկրյա ներդրումների համար ընտրվում էին նպատակային ճյուղեր, մասնավորապես /էլեկտրական/ սարքավորումների, դեղագործության և բժշկական սարքավորումների ճյուղերը: Իռլանդիայում արդյունաբերականացումն ավելի ուշ էր տեղի ունենում, քան արդյունաբերական երկրներում, և առաջնային հումքայինից դեպի մշակված պատրաստի արտադրանքի վերակողմնորոշումը սկսվեց միայն 1960-ականներից: Արդյունքում արդյունաբերական և առևտրային քաղաքականությունները միահյուսվեցին, քանի որ այդպիսի նպատակային կենտրոնացվածությունը հաջողությամբ նպաստեց, որ անցում կատարվի ավանդական գյուղատնտեսական ապրանքների արտահանումից դեպի արդյունաբերական ապրանքների արտահանում:

Արդյունաբերական քաղաքականության վճռականորեն «դեպի դուրս կողմնորոշվածությունն» ակնհայտորեն երևում է 1956 թվականին Արտահանումներից ստացվող շահույթների նկատմամբ հարկային արտոնության (ԱՇԱՅԱ- EPTR) սահմանումից, որը երկարացվեց 1958 թվականին՝ արտահանումից ստացվող շահույթները 100 տոկոսով ազատելով հարկումից:³ Մշակող արդյունաբերության վերահսկողության մասին 1932 թվականի օրենքն անվավեր է ճանաչվել 1964 թվականին. դրանով Իռլանդիայում վերանում էին օտարերկրյա ուղղակի ներդրումների նկատմամբ մնացած բոլոր սահմանափակումները: Արտաքին շուկաների համար արտադրությունը դյուրինացնող մեկ այլ միջոց էր կապիտալի անհատույց տրամադրումն արտահանման համար արտադրող և օտարերկրյա ու տեղական ընկերություններին: Ֆինանսական աջակցություն էր տրամադրվում նաև այն ընկերություններին, որոնք ցանկանում էին վերակազմավորվել ներմուծվող ապրանքների հետ մրցակցելու համար: Թեպետ դեպի դուրս ուղղված քաղաքականությունները հետևողական էին, արդարացի կլինե՞ր մշտ, որ դրանք ներմուծվում էին դանդաղորեն ու հաստատուն կերպով: 1973 թվականին Եվրոպական համայնք մուտք գործելու փաստը Իռլանդիայի՝ դեպի դուրս ուղղվածության ևս մեկ ապացույց է:

1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին Իռլանդիան դարձավ Եվրոպական համայնքում ուղղակի ներդրումների համար նախընտրելի հիմնական վայրերից մեկը, մասնավորապես բարձր տեխնոլոգիական և էլեկտրական սարքավորումներ արտադրող ընկերությունների համար: Իռլանդիան գրավեց առաջատար միջազգային ընկերությունների (Ericsson, Hewlett Packard, Motorola, Siemens և այլն) ուշադրությունը: /Արդյունաբերական զարգացման մարմնի/ Իռլանդական զարգացման գործակալության (ԻՁԳ /ԱՁՄ/ - IDA) հաջողությունը Intel և Microsoft ընկերություններին Իռլանդիա բերելու գործում և Իռլանդիայում այդ ընկերությունների գործունեության հետագա հաջողությունը «ցուցադրական տպավորություն» ստեղծեցին, ինչով ցույց տրվեց, որ Իռլանդիան միջազգային մրցումակ վայր է այդ ճյուղերի համար: Դրանով նաև Իռլանդիայի համար լավ կատարողականի ցուցանիշ ապահովվեց, որով վստահություն ստեղծվեց այլ ընկերությունների մոտ: Սկզբնական հաջողությունները ծնեցին հետագա հաջողություններ՝ ՕՆՆ ներգրավելու առումով: 1987 թվականին Դուբլինում ֆինանսական ծառայությունների իռլանդական կենտրոնի ստեղծումն ամենահաջող գործերից մեկն էր, որի շնորհիվ ամրապնդվեց դեպի երկրից դուրս ուղղվածությունը, ստեղծվեցին զգալի քանակով աշխատատեղեր և զգալիորեն ավելացան պետական եկամուտները:

Չնայած Իռլանդիայում օտարերկրյա ընկերությունների գործունեության ընդլայնմանը՝ 1980-ականները մասնավորապես մշակող արտադրության ճյուղի համար հեռու էին նպաստավոր համարվելուց, քանզի իռլանդական սեփականությամբ ընկերությունները արտաքին մրցակցության հետ կապված մեծ դժվարություններ ունեին: Նույնիսկ զարգացման հետագա փուլերում ակնհայտ էր, որ իռլանդական սեփականությամբ և օտարերկրյա սեփականությամբ ընկերությունների արտադրողականությունները հստակորեն տարբերվում են միմյանցից: Դա մեծ վեճերի տեղիք էր տալիս միջազգային և տեղական ընկերությունների միջև կապակցվածության աստիճանի, ինչպես նաև հետագայում Իռլանդիայի արտադրողականության կայունության մասին:⁴

Ադյուսակ 2-ում ներկայացված են Իռլանդիայի առևտրի և ներդրումների ցուցանիշները՝ համեմատած այլ երկրների հետ, որոնք ցույց են տալիս ազատականության (թափանցիկության) կարևորությունը Իռլանդիայում տնտեսական կատարողականի և զարգացման գործում:

Աղյուսակ 2. Առևտրի և ներդրումների թափանցիկություն. %-ով ՀՆԱ-ի նկատմամբ, 1970-2000թթ.

Առևտրի ազատականություն. ապրանքների միջին արտահանման ու ներմուծման ու ՀՆԱ-ի հարաբերակցություն				
Երկիր	1970	1980	1990	2000
Բելգիա/Լյուքսեմբուրգ	45.5	56.9	60.9	66.2 ¹
Ֆրանսիա	13.0	18.9	18.9	23.0
Գերմանիա	17.4	23.5	25.1	28.0
Իտալիա	13.1	19.9	16.1	22.1
Նիդեռլանդներ	42.8	50.4	45.5	55.7
Դանիա	24.0	26.6	25.3	28.7
Իռլանդիա	33.8	48.7	48.8	67.8
Միացյալ Թագավորություն	16.7	21.0	21.0	21.8
ԱՄՆ	4.2	8.9	8.2	10.3

Ներդրումների ազատականություն (բացություն). Արտադրության մեջ ՕՈՒՆ-ի միջին ներհոսքի և արտահոսքի հարաբերակցությունը ՀՆԱ-ի հետ							
Երկիր	70-74	75-79	80-84	85-89	90-94	95-00	70-00
Բելգիա/Լյուքսեմբուրգ	2.2	2.1	1.5	4.4	7.4	22.8	6.7
Ֆրանսիա	0.7	0.8	0.9	1.8	3.5	6.3	2.3
Գերմանիա	1.2 ²	0.8	0.7	1.3	1.3	5.0	1.7 ³
Իտալիա	0.6	0.4	0.6	0.7	0.9	1.4	0.8
Նիդեռլանդներ	5.2	3.7	4.3	5.6	7.5	18.3	7.4
Դանիա	0.9	0.3	0.4	1.3	3.0	10.8	2.8
Իռլանդիա ⁴	0.7	2.0	1.1	0.3	2.8	8.1	2.5
Միացյալ Թագավորություն	3.2	3.4	3.0	6.0	4.1	12.0	5.3
ԱՄՆ	0.7	1.0	0.9	1.6	1.6	3.2	1.5

Աղբյուր՝ Ruane և Ugur (2005թ.), աղյուսակ 7.1 և աղյուսակ 7.2

¹ Տվյալների սահմանափակության պատճառով ներկայացված են 1997 թվականի տվյալները

² 1971-1974 թվականների տվյալներ

³ 1971-2000 թվականների տվյալներ

⁴ Իռլանդիայի համար ՕՈՒՆ-ի ներհոսքի և արտահոսքի մասին տվյալները 1998 թվականից ի վեր փոփոխվել են, որպեսզի հաշվի առնվեն մեթոդաբանության և ընդգրկման փոփոխությունները:

Ինչպես և կարելի էր սպասել, աղյուսակում ներկայացված ավելի փոքր երկրներին բնորոշ է առևտրի ավելի մեծ ազատականություն, սակայն Իռլանդիայի կատարողականն առանձնանում է մյուսներից: Իռլանդիայի ներդրումային թափանցիկության համեմատաբար ցածր ցուցանիշները կարող են զարմանալի թվալ, սակայն մինչև համեմատաբար վերջերս դեպի դուրս օտարերկրյա ուղղակի ներդրում չի կատարվել: Ապրանքների մեջ ներդրումների գերակշիռ մասը ուղղված էր Իռլանդիայի արտահանման շուկաների համար արտադրությանը, իսկ արտադրական ներդրանքների /սարքավորումներ, տեխնոլոգիաներ, հումք և այլն/ մեծ մասը պետք էր ներմուծել. այստեղից էլ ստացվում է Իռլանդիայի առևտրային և ներդրումային ազատականացման միջև ուժեղ կապը:

«Կելտական վագր» զարգացման փուլի կարևոր բաղկացուցիչ էր ԱՄՆ-ից ՕՈՒՆ ներգրավելու գործում Իռլանդիայի ունեցած հաջողությունը: Աղյուսակ 3-ում ցույց է տրված, որ Իռլանդիայի, ԱՄՆ-ից դեպի Եվրոպա ՕՈՒՆ-ի մեջ բաժինը բացառիկ է, եթե հաշվի առնենք իռլանդական տնտեսության փոքր չափը: Առավել ցայտուն է երևում Իռլանդիայի գրավչությունը էլեկտրական սարքավորումների ոլորտում ԱՄՆ-ից ՕՈՒՆ-ի ներգրավման համար:

Աղյուսակ 3. Իռլանդիայի բաժինը ԱՄՆ-ից Եվրոպա կատարված մշակող արտադրության ՕՈՒՆ-ի մեջ, 1994-2003թթ.

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ընդհանուր	8	3	11	14	12	8	13	6	24	16
Էլեկտրոնային սարքավորումներ	8	5	18	40	54	13	11	-2 ¹	93	36

Աղբյուր՝ Ruane և Ugur (2005թ.), աղյուսակ 7.7

Թիվը բացասական է, քանի որ ՕՈՒՆ-ի զուտ հոսքն էլեկտրական սարքավորումների ճյուղում բացասական էր:

Իռլանդիայում տնտեսական կտրուկ աճի մեկ այլ երկարաժամկետ պատճառ է 1968թ.-ին համատարած անվճար միջնակարգ կրթության համակարգի ներմուծումը: Չնայած որ իռլանդացի տարեց աշխատողներն այնքան էլ լավ կրթված չեն, ըստ միջազգային և Արևմտյան Եվրոպայի չափորոշիչների, երիտասարդների (25-34 տարեկան) մոտ 35%-ն ունի բարձրագույն կրթություն, որը դրականորեն է համեմատվում ԵՄ-ի 26% միջին հետ:

Աշխատուժի մեջ կանանց մասնակցության ավանդական ցածր մակարդակը դարձավ չօգտագործված պաշար, որով բավարարվեց աշխատուժի պահանջարկը: Կանանց մասնակցության մակարդակը զգալիորեն բարձրացավ 1980-ականներից 1990-ականներն ընկած ժամանակահատվածում (1990թ.-ի 43%-ից մինչև 58% 2003թ.-ին), սակայն այն ՏՀԶԿ (OECD) միջին ցուցանիշից դեռ զգալիորեն ցածր է: Իռլանդիայում աշխատուժի մեջ կանանց մասնակցության աճը մեծապես պայմանավորված էր ամուսնացած, հատկապես, երեխա ունեցող կանանց մասնակցության աճով:

Այսպիսով՝ «Կելտական վագրի» հայտնվելուն հանգեցրած գործընթացի որևէ մեկ ու միակ հստակ պատճառ լինելու փոխարեն պարզ է, որ (ինչպես Միրոսլավ Ե Եկարագրում) կա **կուտակային և շրջանագծային պատճառահետևանքային կապի գործընթաց է**, այն իմաստով, որ վերը նշված պատճառներից յուրաքանչյուրը կարելի է խելամտորեն օգտագործել որպես բացատրության տարր՝ միմյանց դրականորեն ուժեղացնող այն զղեցությունների, որոնք համատեղ օգնում են մեզ հասկանալու, թե ինչպես ի հայտ եկավ «Կելտական վագրը»: Սակայն մենք չենք կարող բացատրել, թե ինչ պատճառով բոլոր տարրերը ստեղծեցին նման դրական արդյունք ժամանակի հենց այդ հատվածում:

Այսօր Իռլանդիայի համար կարևորագույն խնդիր է նման շրջադարձային տնտեսական փոխակերպումը շահավետորեն օգտագործելու եղանակը, որպեսզի «Կելտական վագրի» փուլը չլինի լոկ «հասնելու» երկույթ, որի ներուժը արդեն սպառված է, այլ ցատկահարթակ դառնա տնտեսական շարունակական զարգացման համար: Մրցունակության համաշխարհային զեկույցում վերջերս ունեցած դիրքերով բացահայտվում են այդ առումով կարևոր մի շարք հարցեր: Ամենավերջին զեկույցում Իռլանդիան պահպանել էր իր 21-րդ տեղը Համաշխարհային մրցունակության ցուցիչով (ՀԱՄ ցուցիչ): Իռլանդիայի դիրքերն, ըստ ՀԱՄ ցուցչի հիմնական բաղկացուցիչների (հիմնական պահանջներ, արդյունավետության խթաններ ու նորարարության գործոններ), ներկայացված են աղյուսակ 4-ում՝ ՀԱՄ ցուցիչը կազմող «ինը հենասյուններով»:

Չնայած տնտեսական աճով վերջերս ունեցած արտակարգ նվաճումներին՝ կամ, ավելի ստույգ, այդ նվաճումներով հանդերձ՝ բոլոր տեսակների ազգային ենթակառուցվածքներում առկա բացերը դեռ չեն փակվել, և տարիներ շարունակ քիչ ներդրումներ կատարելու արդյունքում դեռ էական լրացուցիչ ներդրումների պահանջ կա միջազգայնորեն ընդունված ստանդարտներին հասնելու համար:⁵

Աղյուսակ 4. ՀԱՍ ցուցիչ և ենթացուցիչներ, Իռլանդիա, 2006թ.

ՀԱՍ ցուցիչ (տեղը)	21			
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Ինստիտուտներ (տեղը)	Ենթակառուցվածքներ (տեղը)	Մակրոտնտ.-ն (տեղը)	Առողջապահություն, տարրական կրթություն (տեղը)
23	17	31	20	24
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՆԵՐ	Բարձրագույն կրթ.-ն ու վերապատրաստում (տեղը)	Շուկայի արդյունավետություն (տեղը)	Տեխնոլոգ.-ն պատրաստվածություն (տեղը)	
18	16	13	24	
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ	Գործարարության կատարելագործվածություն (տեղը)	Նորարարություն (տեղը)		
19	16	20		

Աղբյուր՝ Մրցունակության համաշխարհային զեկույց, 2006-2007թթ., Palgrave Macmillan:

Գործարարության տեսանկյունից հետաքրքիր են նաև Իռլանդիայի դիրքերը ԳԱՍ ցուցիչով, քանի որ դրանք օգտակար ցուցանիշներ են տեղական միջավայրում գործող գործարարության մրցակցային ուժեղ և թույլ կողմերի համար:

Աղյուսակ 5. Գործարար մրցունակության ցուցիչ (ԳԱՍ ցուցիչ) և ենթացուցիչներ, Իռլանդիա, 2001-2006թթ.

	2006	2005	2004	2003	2002	2001
ԳԱՍ ցուցիչ	22	21	21	22	23	22
ԳՄՈ*	23	21	21	22	23	22
Կզն. ^	17	16	21	17	16	18

Աղբյուր՝ աղյուսակ 1, գլուխ 1.1, Մրցունակության համաշխարհային զեկույց 2006-2007թթ., Palgrave Macmillan:

ԳՄՈ* նշանակում է գործարար միջավայրի որակ

Կզն.^ նշանակում է ձեռնարկությունների գործառնությունների ու ռազմավարությունների կատարելագործվածության աստիճան

2006 թվականին գործարարության կատարողականը խիստ սահմանափակող թույլ կողմերը, որոնք պետք է բարելավվեն Իռլանդիայի դիրքերի բարձրացման համար, ներառում են ենթակառուցվածքների անբավարարությունը, անարդյունավետ պետական վարչարարությունը, սահմանափակող աշխատանքային կանոնակարգերը և գնաձևը:

2006 թվականին ձեռնարկությունների գործառնությունների ու ռազմավարությունների վերլուծությունից բխող առանձնահատուկ թերությունները ներկայացված են ստորև (նշված են նաև ամենաբարձր ցուցանիշներով երեք երկրները).

- Միջազգային բաշխման ցանցերի նկատմամբ վերահսկողություն և շուկայավարում (Իռլանդիան 50-րդ տեղում է. առաջին երեքը Ճապոնիան, Ֆրանսիան և Ըվեյցարիան են):
- Օտարերկրյա տեխնոլոգիաների լիցենզավորման տարածվածություն (Իռլանդիան 31-րդ տեղում է, առաջին երեքը Յնդկաստանը, Սինգապուրը և Նիդեռլանդներն են):
- Նորարարության կարողություն, որով գնահատվում է, թե որքանով են ձեռնարկությունները աշխատում հետազոտությունների ու մշակումների վրա և որքանով են ստեղծում ու մշակում իրենց սեփական նոր ապրանքները և գործընթացները (Իռլանդիան 21-րդ տեղում է, առաջին երեքը Գերմանիան, Ճապոնիան և Ըվեդիան են):

Ստահագության տեղիք տվող այդ հանգամանքները կարող են մեկնաբանվել որպես ուղղություններ, որոնք պետք է լինեն քաղաքականություն իրականացնողների ուշադրության կենտրոնում (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածի), և որպես ազդանշաններ պահանջվող փոփոխությունների համար, որպեսզի մեծացվի Իռլանդիայի մրցակցային ներուժի ամրապնդման ու բարելավման հավանականությունը: Այնուամենայնիվ, առկա են որոշ նշաններ առ այն, որ տնտեսության հիմնական կառուցվածքը որոշակի փոփոխության է ենթարկվում: Օրինակ՝ մինչդեռ ՕՈՒՆ-ի ներհոսքը համարվում էր Իռլանդիայի հաջողության կարևոր բաղադրիչ, ՕՈՒՆ-ի արտահոսքի վերաբերյալ ամենավերջին տվյալները (2004թ.) ցույց են տալիս, որ իռլանդական ընկերությունների կողմից կատարվող օտարերկրյա ներդրումները հասել են իրենց երբեմնի ամենաբարձր մակարդակին (12.7 մլրդ եվրո), և Իռլանդիան դարձել է զուտ ներդրող (առանց մասնավոր սեփականության և անշարժ գույքի մեջ արված ներդրումների): ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի տվյալները նույնպես ցույց են տալիս, որ ամերիկյան ձեռնարկությունների աշխատակիցների քանակը Իռլանդիայում (100,000) ավելի շատ է, քան իռլանդական ձեռնարկությունների աշխատակիցների քանակը ԱՄՆ-ում (65,000), սակայն դրանց միջև ճեղքվածքը գնալով նվազում է: Միաժամանակ, հնարավոր է, որ դեռ վաղ կամ անմտություն է մտածել «Կելտական վագրի» միջազգային ասպարեզ ներխուժելու մասին, սակայն իռլանդական ընկերությունների մեծացող միջազգային ընդգրկվածությունը (առևտրի, շուկաներ ներթափանցելու, միջազգային տեղայնացման ու գործարարության զարգացվածության առումներով) տնտեսական հորիզոնում ավելին է, քան միայն «փոքրիկ առկայծումը»: Այնուամենայնիվ, այդ միտումների շարունակման հավանականությունը և թե ինչ գործոններով դա կորոշվի, դեռ վեճերի առարկա են:

Ի լրումն նշվածի, ինչպես և տնտեսական զարգացման յուրաքանչյուր փուլում լինում է, որոշ տարածաշրջաններ անխուսափելիորեն ազգային միջինից ավելի արագ կամ դանդաղ են զարգանում: Կենսամակարդակի վերաբերյալ տվյալներից պարզվում է, որ եկամուտների անհավասարությունը մեծացել է 1993-ից 2002 թվականներն ընկած ժամանակահատվածում (վերջին տարին, որի համար առկա են տարածաշրջանային տվյալներ): Դա մեծապես պայմանավորված էր աշխատուժի արտադրողականության տարբերություններով:⁶ Չնայած վարվող քաղաքականությանը, որը հրապարակվել է 2002 թվականին **Տարածքային ազգային ռազմավարության մեջ** և որով նպատակ է դրվում աճի հիմնական կենտրոնից՝ Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինից տեղափոխել տնտեսական գործունեությունը (քանզի այն խիստ գերբեռնված է, և այնտեղ խիստ բարձր է հողի գինը), կարծես թե բացակայում է այն իրականացնելու քաղաքական «ախորժակը»: Կենտրոնացված քաղաքական կառավարումը Դուբլինում և տեղական ինքնակառավարման անկատարությունը նույնպես խոչընդոտ են տարածաշրջանային որևէ նշանակալի զարգացմանը: Առավել հավասարակշռված տնտեսական միջավայր ունենալու համար պահանջվում է նոր մտածելակերպ տնտեսական զարգացման և տարածաշրջանային զարգացման դերի վերաբերյալ, սակայն մինչ այժմ նման զարգացման որևէ ազդանշան չկա:

¹ Fanning, C. և Murphy, C. (2002թ.).

² Տե՛ս 77-րդ պատկերը, Իռլանդիայի մրցակցության զեկույց, 2006թ.:

³ Եվրոպական հանձնաժողովի կողմից գործադրած ճնշումներից հետո 1978թ.-ից ԱՆԸԱ-ն դադարեցվեց: Այն փոխարինվեց մշակող արդյունաբերության համար մինչև 2000թ. կորպորատիվ շահութահարկի երաշխավորված՝ 10% դրույքաչափի սահմանմամբ, որը հետագայում երկարացվեց մինչև 2010թ.: 1998թ. Եվրոպական հանձնաժողովի հետ համաձայնեցնելուց հետո առևտրով զբաղվող /առևտրային/ բոլոր ձեռնարկությունների համար առաջարկվեց 2003թ.-ից կիրառել շահութահարկի 12.5% դրույքաչափ: Որևէ փուլում որևէ խոչընդոտ չի եղել օտարերկրյա ձեռնարկությունների կողմից Իռլանդիայում ստացված շահույթների դուրս հանման համար:

⁴ Տեղական և օտարերկրյա ընկերությունների կատարողական ցուցանիշների միջև եղած տարբերության վերաբերյալ միջազգային գրականության հետաքրքրական հետազոտությունը, որ կատարել է Bellak-ը (2004թ.), ցույց է տալիս, որ կատարողականների միջև այդ ճեղքվածքը ընկերությունների այս երկու դասերի միջև վերանում է, երբ ընկերության և ճյուղի բնութագրերը կանոնակարգված են: Այնտեղ, որտեղ այդ տարբերությունները մնայուն են դա բացատրվում է ընկերության անդրազգային լինելով և ոչ թե սեփականությամբ:

⁵ Տե՛ս Gallagher, Doyle և O'Leary (2002թ.):

⁶ O'Leary (2002/3)